

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գարիկ Ավագյան

«Սնանկության դատարանի նախագահ»

Սնանկության իրավական կարգավորման խնդիրն ու մրցութային իրավունքի զարգացումը բազմադարյա պատմություն ունեն¹: Մրցութային մասին առաջին հիշատակումները հանդիպում են հռոմեական իրավունքում, թեև դրանք այդ ժամանակաշրջանում վերաբերում էին մրցութային հարաբերությունների պարզ տարրերին: Աստիճանաբար սնանկության վերաբերյալ դրույթները կատարելագործվել են ու տարբեր երկրներում այդ ինստիտուտի զարգացման պատմությունը, տվյալ երկրի առանձնահատկություններով պայմանավորված, ուրույն դրսևորումներ է ունեցել:

Հին հայկական իրավունքի աղբյուրներում սնանկության հարաբերությունները կարգավորող նորմեր չեն հանդիպում: Առաջին հիշատակումը հանդիպում ենք Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց»-ում (1773թ.), որի 212-րդ հոդվածի համաձայն՝ «Ամեն մի պարտապան, որը, նախքան դատարանի առջև պարտատերերի կողմից հայց հարուցվելը, կազմում է իր ողջ ունեցվածքի և պարտքերի հաշվեցուցակը և ներկայացնում իր բնականության վայրի դատարան և երդվում՝ հաստատելով իր կազմած հաշվեցուցակի հավաստիությունը, անմիջապես ստանում է պարտքերից ազատ արձակման երաշխավորագիր և իր ողջ ունեցվածքը հանձնում է դատարանի տնօրինմանը: Դատարանը մարդ է նշանակում և հրամանով նրան հանձնում սույն ունեցվածքը, որպեսզի նա այն վաճառի: Վաճառքից ստացված գումարից հարյուրի հինգերորդ մասը տրվում է վաճառքի գործը կատարող մարդուն, մեկ մասը՝ պարտապանին՝ իր գոյությունը պահպանելու համար, մնացած իննսուներորդ մասը հավասար չափով բաժանվում է բոլոր պարտատերերի վրա և պարտապանն ազատ է հայտարարվում իր մնացած պարտքերից»:

Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունն արժեքավոր ավանդ է հայ հասարակական-իրավական մտքի պատմության մեջ: Ճիշտ է, Սահամանդրության նախագծում ամրագրված դրույթները գործնական կիրառելիություն չունեցան, քանի որ նշված ժամանակահատվածում Հայաստանը որպես ինքնուրույն պետություն գոյություն չուներ, այնուամենայնիվ նախագծում ամրագրված սնանկության դրույթների վերլուծությունից կարելի է փաստել, որ դրանք գրեթե լիովին համապատասխանում էին սնանկության ժամանակակից ինստիտուտին ներկայացվող հիմնական պահանջներին:

Հայաստանում սնանկության հարաբերությունների կարգավորման առաջին փուլը համարվում է Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միանալուց հետո ընկած ժամանակահատվածը: Հայտնի է, որ նույնիսկ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Հայաստանում կիրառվում էր ռուսական օրենսդրությունը: 1832

¹ Իսպանացի իրավագետ Սալդադո Դե Սամոզան մրցութային դիտարկում է պարտատերերի բազմաթիվություն մի պարտապանի դեպքում, իսկ Ա. Խ. Գոլմստենը մրցութային մեկնաբանում է պարտապանի՝ գույքի անբավարարությամբ պայմանավորված մի քանի պարտատերերի մրցակցություն: Իրավաբանական գրականության մեջ մրցութային եզրույթն օրտագործվում է երեք իմաստով. այն առաջին հերթին հրապարակային սակարկությունների ընթացքում պայմանագրի կնքման ձև է, երկրորդ՝ միակողմանի գործարք է և երրորդ՝ պարտատերերի պահանջները բավարարելու միջոց է: Այդուհանդերձ, ընդհանուր տեսակետի համաձայն, մրցութային եզրույթն առավելապես պետք է օգտագործվի երրորդ իմաստով:

թվականին Ռուսաստանում ընդունված սնանկության մասին կանոնադրությունը մինչև 1917 թվականը և դրանից հետո որոշակի փոփոխություններով ու լրացումներով գործեց նաև Արևելյան Հայաստանում և Հայաստանի առաջին Հանրապետությունում¹:

Խորհրդային պետության, ինչպես նաև ՀՍԽՀ սնանկության մասին օրենսդրության հիմքը ՌԽՖՍՀ 1922 և 1927 թվականների քաղաքացիական դատավարության օրենսգրքերն էին: ՀՍԽՀ 1923թ.-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքում սնանկության վերաբերյալ նորմեր նախատեսված չէին, սակայն «ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում գետեղվեցին նման նորմեր: Սասնավորապես, այդ օրենսգրքի 37-րդ գլուխը նվիրված էր ֆիզիկական և իրավաբանական անձանց սնանկությանը:

Ընդհանուր առմամբ, խորհրդային ժամանակահատվածում սնանկության մասին օրենսդրությունն ուներ հատուկ ուղղվածություն, որը դրսևորվում էր պետության շահերի պաշտպանությամբ: Վ. Ա. Ստեպանովի բնորոշմամբ. «Թեև օրենքը զուրկ չէր էական բացթողումներից, սակայն այն կարելի է համարել տվյալ ժամանակաշրջանի իրավաբանական գիտության մեծագույն նվաճումներից մեկը»²:

Հետագայում, այլանային տնտեսության պայմաններում, սնանկության ինստիտուտի դերը գնալով նվազեց, և աստիճանաբար այդ նորմերը օրենսգրքերից և դատագրքերից հանվեցին՝ «անհարկավորության» պատրվակով: Արդյունքում 1964 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգրքում այլևս տեղ չգտան սնանկությանը վերաբերող նորմեր:

Եվ միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո շուկայական հարաբերությունների անցնելու հրամայականով հայրենական տնտեսության մեջ հնարավոր եղավ սնանկության ինստիտուտի կարգավորումը: Մրցութային իրավունքի զարգացման ժամանակակից փուլի սկիզբ դրվեց, սնանկության ինստիտուտը նորովի վրեպիմաստավորվեց «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: ՀՀ Գերագույն խորհուրդն օրենքն ընդունեց 15.06.1995թ.-ին՝ բավականին բարդ մի ժամանակաշրջանում, երբ երկրում տեղի էին ունենում տնտեսական վերափոխումներ, նոր էին ձևավորվում շուկայական հարաբերությունները, պետական սեփականությունից անցում էր կատարվում մասնավորին, ավելի քան յոթանասուն տարվա ընդմիջումից հետո հայ իրականության մեջ փորձ էր արվում կանոնակարգել բոլորովին նոր կամ ավելի ճիշտ՝ գրեթե մոռացված հարաբերություններ, որոնք մինչ այդ խորթ էին եղել խորհրդային պետաիրավական համակարգին: Որպես օրենքի նպատակ նախատեսվեց հնարավոր առավելագույն չափով բավարարել պարտատերերի օրինական պահանջները, հնարավորություն ստեղծել պարտապանի և պարտատիրոջ միջև համաձայնության պայմանագրերի կնքման համար՝ պարտապանի վերակազմավորման, ֆինանսական դրության առողջացման և հաշտության գործարքների կնքման միջոցով, սնանկ ձանաչված պարտապանին ազատել այն պարտքերի վճարումից, որոնց կատարման համար հնարավորություններ չկան, պարտապանին հնարավորություն տալ պահպանելու ձեռնարկությունը և դրա անխափան գործունեությունը, իսկ անհնարինության դեպքում՝ վերակազմավորել ձեռնարկությունը: Ճիշտ է, օրենքը չունեցավ բավարար իրավակիրառություն, և օրենքի գործողության գրեթե մեկուկես տարվա ժամանակահատվածը ցույց տվեց, որ այն բավականին հեռու էր օրենքով ամրագրված նպա-

¹ Տե՛ս Ռ. Գ. Պետրոսյան, Ղատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան-2001, 49-130 էջ:

² Степанов В. В. Несостоятельность (банкротство) в России, Франции, Англии, Германии. М. 1999, с. 37.

տակն իրագործելու, տնտեսության առջև ծառայած խնդիրները կարգավորելու և սնանկության ինստիտուտի առաքելությունն իրականացնելու համար, սակայն դրական էր այն փաստը, որ պատմական այդ հակասկան և բարդ ժամանակաշրջանում օրենքի առկայությունը հնարավոր դարձրեց մրցութային վարույթի իրականացումը, որն արդեն իսկ դրական զարգացումների նախապայման էր: Օրենքում առկա բացթողումներն ու թերությունները, ինչպես նաև ՀՀ-ում ստեղծված օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալները պայմանավորեցին նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը: 1996թ.-ի դեկտեմբերի 3-ին ընդունվեց «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքը (այսուհետև՝ սնանկության մասին 1996թ.-ի Օրենք), որի 77-րդ հոդվածի համաձայն՝ «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքը ճանաչվեց ուժը կորցրած: Սնանկության մասին նոր օրենքը նախկինի համեմատ ավելի էր համապատասխանում տնտեսության զարգացման հեռանկարներին և առավել մանրամասն էր կարգավորում սնանկության ընթացակարգերը: Եթե նախկին օրենքով նախատեսված էր հաշտության գործարքների կնքման հնարավորությունը սնանկության վերաբերյալ գործի վարույթի ցանկացած փուլում¹, ապա նոր օրենքով հաշտության գործարքների կնքման հնարավորություն ընդհանրապես չնախատեսվեց. դրա փոխարեն ամրագրվեց ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման հնարավորությունը²: Օրենքով սահմանվեցին պարտապանի կողմից նախկինում կնքված գործարքներն անվավեր ճանաչելու, պարտապանի միջոցներն ավելացնելու նպատակով վերջինիս կողմից կնքված պայմանագրերը կառավարչի միջնորդությամբ լուծելու կամ ուժի մեջ թողնելու հնարավորությունները, սահմանվեց սնանկության վարույթի ընթացքում պարտապանի գործունեության կասեցման և վերսկսման հնարավորությունը: Օրենքում հաշվի էր առնված նաև անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունները, մասնավորապես՝ սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունների սնանկության վարույթի առանձնահատկությունները³: Չնայած օրենքում ամրագրված նորամուծություններին՝ օրենքում առկա էին մի շարք իրարամերժություններ, ոչ հստակ և ամբողջական վարույթներ, բաց կամ չկանոնակարգված հարաբերություններ: Օրենքում անընդունելի էր տարբեր տեսակի պարտապանների նկատմամբ կիրառվող սնանկության բացարձակ միատեսակ ընթացակարգերի ամրագրման փաստը: Սահմանված էր սնանկության, ֆինանսական առողջացման կամ լուծարման գործընթացը, որն անցնում էր դատական վերսկսողության ներքո՝ առանց սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների սահմանազատման: Կառավարիչներին ներկայացվող պահանջների անբավարարության և նրանց լիցենզավորման կարգի բացակայության հետևանքով շատ հաճախ կառավարիչներ էին դառնում ոչ իրավասու անձինք: Օրենքով նախատեսված չէր սնանկության պարզեցված ընթացակարգեր լուծարվող կամ բացակայող պարտապանի սնանկության համար, որի հետևանքով դատարանների վարույթներում կուտակվում էին հսկայական գործեր:

¹ Տե՛ս «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքի 38-42 հոդվածները:

² Տե՛ս «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքի 49-54 հոդվածները:

³ Տե՛ս «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օրենքի 75 հոդվածը:

Գործող օրենքի նման բացթողումները երկար ժամանակ հանդուրժել հնարավոր չէր, և 1999 թվականի հունվարի 30-ին ընդունվեց դատարանների նախագահների խորհրդի թիվ 5 որոշումը, որով առաջարկվեց դատավորներին կասեցնել իրենց վարույթում գտնվող սնանկության վերաբերյալ գործերի վարույթները՝ մինչև խնդրի օրենսդրական կարգավորումը: Դատարանների նախագահների խորհրդի որոշումն ուներ իր իրավական հիմնավորումը: ՀՀ-ում իրականացված դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունվեց քաղաքացիական և քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքերը, որը հակասություն առաջացրեց սնանկության մասին 1996 թվականի Օրենքի և օրենսգրքերի միջև: Դատարանների նախագահների խորհուրդն արձանագրեց այդ օրենսդրական հակասությունը, և սնանկության գործընթացը Հայաստանի Հանրապետությունում դադարեց գործելուց: Թե ինչպիսի հետևանքների կարող էր բերել սնանկության ինստիտուտի բացակայությունը շուկայական տնտեսությանը, այն էլ ոչ քաղաքակիրթ շուկայի պայմաններում, ակնհայտ է: Սա էր հիմնական պատճառը, որ 2000 թվականի հունիս ամսին ՀՀ դատավորների միությունը ստեղծեց սնանկության հարցերով զբաղվող դատավորների աշխատանքային խումբ, որն իր առջև խնդիր դրեց բարեփոխել սնանկության մասին օրենքը: Այդ խումբն իր 16.06.2000 թվականի անդրանիկ նիստում ընդունեց հայտարարություն, որի եզրակապիչ մասում նշված էր.

«Դատավորների միության աշխատանքային խումբը՝

-արձանագրում է սնանկացման գործընթացի վերսկսման անհրաժեշտությունը և այդ նպատակով համապատասխան քննարկումների կազմակերպման անհրաժեշտությունը դատարանների նախագահների խորհրդի հետ.

-գտնում է անխուսափելի սնանկության վերաբերյալ օրենսդրության հետագա կատարելագործումը.

-անհրաժեշտ է համարում հրատապ միջոցառումներ իրականացնել դատավորների և մրցութային կառավարիչների սնանկության վերաբերյալ ուսումնական ծրագրերի մշակման ու իրականացման ոլորտում.

-անհրաժեշտ է համարում դիմել շահագրգիռ միջազգային և օտարերկրյա կազմակերպություններին՝ ուսումնական ծրագրերի իրականացման համար աջակցություն ստանալու խնդրանքով»:

Տեսնելով, որ սնանկության մասին նոր օրենքի ընդունումը ձգձգվում է, իսկ այդ վիճակը երկար ժամանակ չէր կարող շարունակվել, 2000 թվականի օգոստոսի 16-ին դատարանների նախագահների խորհուրդը որոշում է կայացնում 1999 թվականի թիվ 5 որոշումը լրացնելու և փոփոխելու մասին, այն է՝

1. Ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետը,

2. Որոշումը լրացնել 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«Սնանկության վերաբերյալ գործերը քննության առնել և լուծել «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ 1996թ. դեկտեմբերի 3-ի օրենքով, նկատի ունենալով, որ այդ օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի միջև հակասությունների դեպքում գործում են վերջիններիս նորմերը և ընդհանուր սկզբունքները»: Արդյունքում, մինչև նոր օրենքի ընդունումը դատավորները շարունակեցին սնանկության վերաբերյալ գործերը քննել 1996 թվականի սնանկության մասին օրենքով:

2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվեց անվճարունակության (սնանկության) մասին ՀՀ օրենքը (այսուհետև՝ սնանկության մասին 2003թ. Օրենք), որի 101-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների անվճարունակության (սնանկացման) և ֆինանսական առողջացման մասին» ՀՀ օ-

րենքը ճանաչվեց ուժը կորցրած: Մինչ օրենքի նախագիծն Ազգային ժողովի ընդունմանը ներկայացնելը երկար ժամանակ ընթանում էին քննարկումներ՝ դրա վերջնական տարբերակը մշակելու համար: Մի կողմից փորձ էր արվում կիրառել զարգացած իրավական համակարգեր ունեցող երկրների սնանկության մասին օրենքներում առկա դրական դրսևորումները, մյուս կողմից էլ լրջագույն խնդիր էր այդ օրենքներում ամրագրված դրույթները մեր տնտեսության առանձնահատկություններին համապատասխանեցնելու և սնանկության մասին նախկին օրենքների գործողության ընթացքում ի հայտ եկած հիմնախնդիրների վերաբերյալ հայրենական իրավակիրառ պրակտիկային համահաիունչ լուծումներ գտնելու անհրաժեշտությունը: Արդյունքում, նոր օրենքում նախատեսվեցին սնանկության ինստիտուտին վերաբերող նորմեր, որոնք սկզբունքորեն տարբերվում էին նախկին օրենքներով ամրագրվածներից: Առաջին անգամ նախատեսվեց պարտապանի և պարտատերերի պարտականությունը սեփական սնանկության ճանաչման նպատակով դատարան դիմելու համար, սահմանվեց անձնական գույքային պատասխանատվություն դատարան դիմելու պարտականությունը չկատարելու համար, ընդլայնվեց պարտապանին սնանկ ճանաչելու համար դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Պարտատերերի կողմից պարտապանին սնանկ ճանաչելու դիմում ներկայացվելու դեպքում նախատեսվեց անվճարողունակության չափանիշը, իսկ պարտապանի կողմից իրեն սնանկ ճանաչելու դիմում ներկայացվելու դեպքում սահմանվեց ինչպես անվճարողունակության, այնպես էլ վճարելու անկարողության չափանիշները: Օրենքով որպես նոր ինստիտուտ նախատեսվեցին կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպությունը, անհատ ձեռնարկատիրոջը սնանկ ճանաչելու հնարավորությունը, ամրագրվեցին կառավարչի անձնական գույքային պատասխանատվությունը պարտատերերին և պարտապանին վնաս պատճառելու դեպքում, ինչպես նաև կառավարչի պարտականությունն իր քաղաքացիական պատասխանատվությունն ապահովագրելու վերաբերյալ: Սնանկության վարույթի նկատմամբ վերահսկողության լիարժեք մեխանիզմների ապահովման համար ընդլայնվեցին պարտատերերի ժողովի և խորհրդի իրավունքները, հստակեցվեցին ժողովի մասնակիցների իրավունքները և որոշումների ընդունման կարգը: Թեև սնանկության մասին նախորդ երկու օրենքներում սահմանված էին պարտատերերի առաջին և հետագա ժողովների, պարտատերերի խորհրդի հասկացությունները և դրանց ընդհանուր նկարագիրը, սակայն դրանց հրավիրման, գումարման և անցկացման, ինչպես նաև դրանց իրավասությունները, մասնակիցների իրավունքներն ու որոշումների ընդունման կարգը մանրամասն կարգավորված չէին, ինչը լուրջ դժվարություններ էր առաջացնում սնանկության վարույթում առանձին որոշումների կայացման և գործողությունների կատարման հարցում և հնարավորություն չէին տալիս ձևավորել միասնական պրակտիկա այս բնագավառում: Օրենքով հնարավորինս հստակեցվեցին պարտապանի ֆինանսական առողջացման ընթացակարգը, ֆինանսական առողջացման ընթացքում կառավարչի դերն ու լիազորությունները, առողջացման արդյունքում սնանկության գործն ավարտելու կարգը: Օրենքով ամրագրվեցին սնանկության պարզեցված ընթացակարգերը, որոնք թույլ տվեցին հաշվի առնել լուծարվող և բացակայող պարտապանների սնանկության առանձնահատկությունները: Կեղծ ու կանխամտածված սնանկության կանխարգելման, սնանկության վարույթի ընթացքում անօրինական գործողությունները կանխելու համար օրենքով սահմանվեցին կեղծ և կանխամտածված սնանկության բնորոշումները: Այս ամենն անշուշտ նպաստեց սնանկության վարույթների արդյունավետության բարձրացմանը և ստեղծեց իրական նախադրյալներ այս ոլորտում առկա հնարավոր չարաշահումները կանխելու համար, սակայն արդեն իսկ օրենքի գործողության սկզբնական ժամանակաշրջանում անհրաժեշտություն առաջացավ օրենքով ամրագրված բազմաթիվ նորմերի փոփոխությունների և լրացումների, որոնց արդյունքում օրենսդիրը նպատակահարմար գտավ ոչ թե օրենքում փոփո-

խութիւններ և լրացումներ կատարել, այլ ընդունել նոր օրենք: Բացի այդ, պետք է նշել, որ օրենքով չէր կարգավորվում ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու հնարավորությունը, որն անկասկած օրենքի հիմնական թերություններից մեկն էր, քանի որ, մեր խորին համոզմամբ, քաղաքացիական շրջանառության սուբյեկտների համար անհրաժեշտ է սահմանել հավասար պայմաններ ու հնարավորություններ: Եթե սնանկ ճանաչված իրավաբանական անձն ազատվում է չվճարված բոլոր պարտքերից, ապա սնանկ ճանաչված քաղաքացին նույնպես պարտատերերի հետ հաշվարկներ կատարելուց հետո, պետք է ազատվի գույքի անբավարարության պատճառով չվճարված պարտավորությունների կատարումից: Ինչպես նշում են սնանկության մասին 2003 թվականի օրենքի մեկնաբանությունների հեղինակներ Ս. Մուկուչյանն ու Հ. Մանուկյանը, օրենսդիրը վաղաժամ համարեց ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու ինստիտուտի ներմուծումը, քանի որ սնանկ ճանաչված քաղաքացու ամենալուրջ հիմնահարցը նրա չմարված պարտավորությունների ճակատագիրն է: Եթե չմարված պարտավորությունները չեն ներվում, ապա իմաստագրկվում է սնանկ ճանաչելը, իսկ ներելու պարագայում հանգեցնում է ավելի լուրջ հիմնախնդիրների¹: Եվ թերևս այդ հիմնահարցի վերաբերյալ վերջնական կողմնորոշման բացակայությունն էր, որ օրենսդիրն զերծ պահեց սնանկության մասին 2003թ. Օրենքում ֆիզիկական անձանց սնանկության ինստիտուտի ամրագրումից:

ՀՀ ԱԺ-ն 25.12.2006թ.-ին ընդունեց «Սնանկության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 10.02.2007թ.-ին, և այդ պահից ուժը կորցրած ճանաչվեց «Անվճարունակության սնանկության մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի օրենքը: Սնանկության մասին գործող օրենքը և՛ դատավարական, և՛ նյութական բնույթի նորմեր պարունակող օրենսդրական ակտ է: Ասել, որ սնանկության մասին գործող օրենքը լիովին համապատասխանում է սնանկության ինստիտուտին ներկայացվող ժամանակակից պահանջներին, և որ օրենքում հաշվի են առնված մեր տնտեսությանը հարիր բոլոր առանձնահատկությունները այս ինստիտուտի լիարժեք կենսագործման համար, այնքան էլ իրատեսական չէ, մասնավորապես եթե հաշվի առնենք, որ ներկայումս Ազգային ժողովի օրակարգում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որով էական փոփոխություններ են նախատեսվում: Չնայած այդ ամենին չպետք է մոռանալ նաև, որ մրցութային իրավունքի կողմից կարգավորվող հարաբերությունները, լինելով որպես անընդհատ փոփոխվող և զարգացող, շուկայական տնտեսության զարգացմանը համընթաց, անընդհատ կարիք ունեն կատարելագործման:

¹ Տե՛ս Մեկնաբանություններ «Անվճարունակության (սնանկության) մասին» ՀՀ օրենքի, խմբագրությամբ Հ. Մանուկյանի և Ս. Մուկուչյանի, Երևան, 2005, էջ 17:

ИСТОРИЯ РАЗВИТИЯ ИНСТИТУТА БАНКРОТСТВА В АРМЕНИИ

Гарик Авагян

*Преподаватель кафедры гражданского процесса ЕГУ,
Председатель суда по делам о банкротстве Республики Армения*

В статье рассматривается история развития банкротства в Армении. Исследование охватывает изучение правовых актов, регулирующих закон о банкротстве, начиная с источников древнеармянского права до периода принятия действующего закона о банкротстве. Была также предпринята попытка сравнить правовые акты Армении, действующие в разные периоды времени, что показывает, что каждый этап развития института банкротства характеризуется своими особенностями.

BANKRUPTCY INSTITUTE DEVELOPMENT HISTORY IN ARMENIA

Garik Avagyan

*Lecturer at the YSU Chair of the Civil Procedural,
Chairman of the Bankruptcy Court of the Republic of Armenia*

The article examines the history of the development of bankruptcy in Armenia. The research covers the study of legal acts regulating bankruptcy law from the sources of ancient Armenian law to the period of adoption of the bankruptcy law. An attempt was also made to compare the legal acts in Armenia in different periods. This shows that at each stage of development of the institution of bankruptcy, it is characterized by its own peculiarities.

Բանալի բառեր – անվճարունակություն, սնանկության ինստիտուտ, օրենսդրություն, իրավական գործիքներ, դատավարություն

Ключевые слова: несостоятельность, институт банкротства, законодательство, правовые инструменты, судопроизводство

Key words: insolvency, bankruptcy institution, legislation, legal instruments, legal process